



Հայաստան հաճախական հիճնադրամ

Հայաստանի Հանրապետության Նախագահի 2018 թվականի մրցանակ մրցանակի ներկայացվող փաստաթղթային փաթեթի բովանդակությունը

1. Դիմում-հայտ (կից ձևը լրացնել ձեռքով),
2. Անձնագիր և անձնագրի պատճեն,
3. Կենսագրական տվյալներ (CV),
4. Հրատարակված աշխատանքների ցանկ,
5. Երեք երաշխավորագիր մրցանակի ներկայացվող ստեղծագործության, աշխատանքի մասին՝ տրված տվյալ ոլորտի հետ առնչվող մասնագետների կողմից (ցանկալի է, որ նրանցից մեկը լինի ոչ Հայաստանից, թարգմանված հայերեն, ոչ պաշտոնական), որոնցում պետք է փաստարկված ներկայացվի ստեղծագործության, աշխատանքի՝ մրցանակի արժանի լինելու հանգամանքը:
6. Մրցանակի ներկայացվող ստեղծագործությունը, աշխատանքը կամ դրա նկարագրությունը (գրքեր, գիտական հոդվածներ, տեսագրություն, ձայնագրություն, լուսանկարներ, համակարգչային, ինտերնետային ներկայացում, և այլն):

Ներկայացվող աշխատանքը (գիտական հոդվածների շարքը) պետք է ունենա միասնական, ընդհանրական ուղղվածություն:

Ծ ա ն ո թ յ ո Ւ մ

Ներկայացվում է առանձին ութ (8) օրինակ փաստաթղթային փաթեթ գրականության բնագավառի համար կոմպլեկտավորված վերոնշյալ հերթականությամբ, մեկը՝ բնօրինակ, մնացածը՝ պատճենահանված:

Բնական գիտությունների, տեխնիկական և ինֆորմացիոն տեխնոլոգիաների, ֆիզիկայի, հումանիտար գիտությունների, արվեստի և բժշկագիտության բնագավառների մրցանակի ներկայացվող բոլոր փաստաթղթերը անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային տարբերակով՝ կրիչով և 2 (երկու) օրինակ փաստաթղթային փաթեթով մեկը՝ բնօրինակ, մյուսը՝ պատճենահանված:

Եթե արվեստի բնագավառի համար դիմորդը հնարավորություն չունի փաստաթղթերը էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու, ապա ներկայացվում է առանձին ութ (8) օրինակ փաստաթղթային փաթեթ, կոմպլեկտավորված վերոնշյալ հերթականությամբ, մեկը՝ բնօրինակ, մնացածը՝ պատճենահանված:

Վերոնշյալ 2,3,4 կետերում նշված փաստաթղթերը ներկայացնել բոլոր հավակնորդների համար: Երաշխավորագրերը ներկայացնել ստորագրված և կնիքով վավերացված (ոչ նոտարական):

Համահեղինակությամբ կատարված աշխատանքների դեպքում, դիմում-հայտին անհրաժեշտ է կցել տեղեկանք, որը կարտացոլի մրցանակի հավակնորդների մասնակցության տոկոսային հարաբերությունը և ստորագրված կլինի բոլոր հավակնորդների կողմից: Սեկ հայտում մրցանակի հավակնորդների թիվը չպետք է գերազանցի հինգը:

Փաստաթղթերի ընդունման ժամկետը՝ 2018 թվականի դեկտեմբերի 3-ից մինչև 2019 թվականի հունվարի 31-ը ներառյալ:

Ներկայացման համար անհրաժեշտ փաստաթղթերը կարելի է ստանալ «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր վարչության գրասենյակից և հիմնադրամի կայքից www.himnadram.org:

Գործերը ներկայացնելու և մանրամասն տեղեկությունների համար դիմել «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր վարչություն՝ տ-ն Աիդա Խաչիկյանին:

Հայտերն ընդունվում են մաս օնլայն տարբերակով:

Հեռ. 52-09-40 (106); 56-01-06 (106); email aida@hmnadram.org
0010, Երևան, Հայաստանի Հանրապետություն, Կառավարական 3-րդ մասնաշենք, 2-րդ հարկ